ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 հունվարի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

9
(3040)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

450 ԽՄ ՋՈՒՐ ԿՈՐՈՒՄ Է ՃԱՆԱՊԱՐՀԻՆ. ՓԱՇԻՆՅԱՆԻ «ՋՐԻ ԾՈՐԱԿԻ» ՀԵՏՔԵՐՈՎ

Հայաստանում ոռոգման ջրի սղություն կա, սակայն Կառավարությունը՝ի դեմս Ջրային կոմիտեի, չի խոստովանում դա:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սոցցանցի իր էջերում գրել էր. «Հարցեր, որոնց համապարփակ եւ փոխկապակցված պատասխանը ոչ մի վիճակագրություն մեզ չի տա.

1. Հայաստանի Հանրապետությունում քանի՞ հոգի կա, որ հայտարարում է, որ ամբողջ ձմեռ ծորակը բաց է թողնելու, որովհետեւ սառում է. եթե որեւէ մեկը իր այս իրավունքը վիճարկի, ինքը կդիմի կտրուկ եւ վճռական գործողությունների:

2. Հայաստանի Հանրապետությունում քանի՞ հոգի կա, որ սափրվելիս կամ ատամ լվանալիս ծորակը բաց է թողնում, ընդ որում՝ ամբողջ թողունակությամբ, եւ ոչ թե բացում-փակում է ըստ անհրաժեշտության»:

Ըստ Փաշինյանի՝ այս հարցերը չունեն որեւէ վիճակագրություն:

Եկեք միասին հասկանանք՝ ջրի վերաբերյալ առհասարակ ինչ կարեւոր տվյալներ կան: «Ժողովուրդ» օրաթերթը դրանք իմանալու համար դիմել է ՀՀ ջրային կոմիտե՝ տեղեկանալու, թե ՀՀ-ում ընդհանուր առմամբ քանի՞ խորանարդ մետր ոռոգման ջրային պաշար կա: Խնդրել էինք նշել, թե քանի՞ խորանարդ մետր խմելու ջրային պաշար կա հանրապետությունում, եւ պահանջել էինք տվյալները տրամադրել բացարձակ թվերով, ոչ թե տոկոսային հարաբերակցությամբ, թե ոռոգման ջրային պաշարի քանի խորանարդն է կորչում մինչեւ արտ հասնելը:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ Ջրային կոմիտեից տեղեկացանք. «ՀՀ-ում բարենպաստ պայմանների առկայության դեպքում տարեկան ընդհանուր առմամբ կարող է ձեւավորվել շուրջ 7.2 մլրդ մետր խորանարդ մակերեւութային հոսք, որից 1.2 մլրդ մետր խորանարդ ջրային ռեսուրս հնարավոր է ամբարել 80 ջրամբարներում, իսկ ոռոգման նպատակով շահագործվող ջրամբարներում կարող է կուտակվել մոտ 1.02 մլրդ մետր խորանարդ (օգտակար ծավալ՝ 940 մլն մետր խորանարդ), ոռոգման նպատակով ջրառն իրականացվում է նաեւ այլ ջրամբարներից»,- ասված է հարցման պատասխանում:

Նիկոլ Փաշինյանը խոսում էր ջուրը խնայելուց, էկոլոգիական բարեփոխումներից, սակայն խմելու ջրի պաշարի ծավալի մասին հարցադրումները Կառավարության ենթակայության տակ գտնվող Ջրային կոմիտեի իրավասության շրջանակներից դուրս են: Նման պատասխան փոխանցել են Ջրային կոմիտեից: Կոմիտեից խուսափել են հստակ թվերով ասել, թե ոռոգման ջրի որքան կորուստ ունի Հայաստանը, սակայն ստացել ենք հետեւյալ պատասխանը. «Ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման նպատակով 2024 թվականին իրականացվել է շուրջ 986 մլն խորանարդ մետր ջրառ, որից շուրջ 538 մլն մետր խորանարդ ջուր մատակարարվել է ջրօգտագործողներին»:

Ստացվում է, որ Հայաստանն ունի 448 մլն խորանարդ մետր ոռոգման ջրի կորուստ, ու այս բնական ռեսուրսի ահռելի կորուստը Փաշինյանին, կարծես թե, չի հետաքրքրում, քանի որ նա, հայտարարագրումից զատ, այս հարցով եթեր չի մտնում ու չի ասում, թե ովքեր են ջրի դեւերը, որ նստել են մեր ջրի ակունքներին եւ չեն թողնում, որ այն ամբողջությամբ հասնի սպառողին:



Հակառուսական իր հայտարարությունների համար ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը լուրջ փաստի առաջ է կանգնել: Նա չգիտի՝ինչպես արդարանա հյուսիսային իր գործընկերների առջեւ, որպեսզի հավատան, որ չի արել այդքան ռուսատյաց հայտարարություններ: ԱԺ-ից մեզ լուրեր փոխանցեցին, որ ՌԴ-ից պահանջել են ԱԺ նախագահից կամ հերքել ու դատի տալ լրատվամիջոցին կամ խոստովանել, որ ասել է այդ խոսքերը: Ալեն Սիմոնյանն էլ որոշել է հետ կանգնել իր խոսքերից: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը հունվարի 24-ին բալթյան երկրների խորհրդարանականների հետ ունեցած դռնփակ հանդիպման ժամանակ արտահայտել է կոշտ քննադատություն Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ, որը տարակուսանք է առաջացրել անգամ բալթյան երկրների ներկայացուցիչների մոտ: Ալեն Սիմոնյանը բալթյան երկրների ներկայացուցիչների հետ ունեցած փակ հանդիպման ժամանակ հայտարարել է, թե Ռուսաստանը պետք է պարտվի, վերանա, որպեսզի մեր եւ բալթյան երկրների համար «լավ լինի»: Սիմոնյանը նաեւ ավելացրել է, որ Ռուսաստանի կործանումը կարող է Հայաստանի եւ բալթյան երկրների համար «լավ հեռանկարներ» բացել»: «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով այս միջադեպը, նոր մանրամասներ է պարզել դրա վերաբերյալ: Այն, որ Ալեն Սիմոնյանի եւ բալթյան երկրների խորհրդարանականների հետ անցկացված դռնփակ հանդիպումը անցել է խիստ հակառուսական մթնոլորտում, դրա մասին փաստում են նաեւ այդ երկրների տարածած պաշտոնական հաղորդագրությունները: Լատվիայի Սայեմայի (Ազգային ժողով) պաշտոնական էջում հանդիպումից հետո հետեւյալ ռելիզն է տարածվել. ««Այն երկրները, որոնք ձգտում են ազատվել Ռուսաստանի ուղեծրից, անխուսափելիորեն կբախվեն նրա դիմադրությանն ու սադրանքներին: Սա պետք է ընդունել հանգիստ վճռականությամբ եւ լուծել՝ հստակ կենտրոնանալով սահմանված նպատակների վրա»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՔՊ-ում ներկուսակցական գզվռտոցը շարունակվում է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեւ ամպեր են կուտակվել ՔՊ-ական կանանց գլխին: Խոսքը Արփի Դավոյանի եւ Լուսինե Բադալյանի մասին է: ՔՊ-ական այս կանայք վերջին շրջանում զբաղված են դավեր նյութելով ու մյուս թիմակիցների վրա կոմպրոմատներ փնտրելով, ինչը բարկացրել է Նիկոլ Փաշինյանին ու մյուս ՔՊ-ականներին: Դավոյան-Բադալյան զույգը հատկապես ջանք չի խնայել Տիգրան Ավինյանին սեւացնելու համար: Վերջիններս ՔՊ նիստերին պարբերաբար բողոքել են Ավինյանի աշխատանքից, նրան մեղադրել կոռուպցիայում թաթախված լինելու մեջ, իսկ երբ Նիկոլ Փաշինյանը պահանջել է, օդում խոսելու փոխարեն, փաստեր ներկայացնել, Լուսինե Բադալյանն ու Դավոյանը լռել են, չեն կարողացել ապացուցել իրենց ասածը: Փաշինյանն ու ՔՊ-ականներն էլ մեղադրել են նրանց՝ բոլորին անտեղի զրպարտելու ու անհիմն տեղեկություններ տարածելու համար: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ այս իրավիճակը վատ դրության մեջ է դրել ՔՊ-ական կանանց. օրուգիշեր նրանք կոմպրոմատներ են փնտրում, որպեսզի արդարացնեն իրենց տարածած հերյուրանքները, ինչն այդպես էլ չի հաջողվում:

Տրանսպորտի թանկացման իր նախաձեռնությունը 4 անգամ փոփոխած, «կարած-ձեւած» քաղաքային իշխանությունը օրերս հերթական հետքայլը կատարեց՝ 1 ուղեւորությունը 150 դրամ՝ 300-ի փոխարեն: Քաղաքապետ Տիգրան Ավինյանը գործակարգավարական նիստին պնդում էր՝ հնարավոր չէ որեւէ փոփոխություն կատարել, այդ թվում՝ ուղեւարձը 150 դրամ դարձնել. բայց արի ու տես, որ անհնար ոչինչ չկա: Իսկ ի՞նչն է անդրդվելի ՔՊ-ին ստիպել հետքայլ կատարել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հասարակության դժգոհությունների ալիքը խիստ անհանգստացրել է ՔՊ-ին. մի քանի անգամ նեղ կազմով նիստ են արել Փաշինյանի գլխավորությամբ ու քննարկել ուղեվարձի հարցը: Նիստերի ժամանակ մի քանի ՔՊ-ականներ ասել են, թե առանց թանկացման հնարավոր չէ տրանսպորտային համակարգում ռեֆորմներ անել, իսկ ՔՊ-ի մի թեւն էլ, որոնք գերակշիռ մաս են կազմել, պնդել են, որ սրանով իսկապես ռիսկի տակ են դնում իրենց իշխանությունը, ու հնարավոր է՝ փետրվարի մեկին սոցիալական այնպիսի բունտ հասունանա, որ իրավիճակն իրենց հսկողությունից դուրս գա: ՔՊ-ականներին նաեւ մտահոգել է այն, որ մինչ օրս հանրության քիչ տոկոսն է ձեռք բերել իրենց մշակած տրանսպորտային փաթեթները: Այսպիսով՝ երկար ու բուռն քննարկումներից հետո որոշել են ռիսկի չգնալ ու հասարակության նյարդերի հետ չխաղալ՝ այն էլ ընտրությունների շեմին:

ԶՐՈՒՅՑ

ՓԵՏՐՎԱՐԻ ՄԵԿԻՑ ԿՄԵԿՆԱՐԿԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ԴԵՄ ԱԿՑԻԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է անդրադառնալ տրանսպորտային համակարգում սպասվող փոփոխություններին:

Այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթի տաղավարում հյուրընկալվել է ՀՀՄ անդամ Հայկ Ստեփանյանը, ով մանրամասներ է ներկայացրել, թե ինչ ակցիաներ են իրականացնելու՝ փետրվարի մեկից սկսած:

-Պարոն Ստեփանյան, հայտնի է, որ փետրվարի 1-ից հասարակական տրանսպորտի սակագինը փոխվելու է, ինչի պատճառով էլ մեկնարկելու են շատ բողոքի ակցիաներ, եւ բունտ է հասունանում: Դե՞մ եք արդյոք տրանսպորտի թանկացմանը, թե՞ ոչ:

-Երեւանի տրանսպորտի թանկացումը, ըստ էության, բնակչության բոլոր շերտերին է վերաբերում, որովհետեւ տրանսպորտը այն գործիքն է, որից օգտվում է ողջ քաղաքը: Թանկացումը, բնականաբար, համարում ենք անընդունելի: Մենք երկար ժամանակ է՝ խոսում ենք սրա մասին. որեւէ հիմնավորում չկա, որ թանկացումը կնպաստի մարդկանց կյանքի որակի բարելավմանը, եւ այնպես էլ չէ, որ մարդիկ սկսել են ավելի շատ գումար աշխատել: Տրանսպորտի թանկացումը եւս մեկ բեռ է, որը գործող վարչախումբը փորձում է բարդել քաղաքացիների ուսերին: Սա միակ հարցը չէ. թե՛ տրանսպորտի թանկացումը, թե՛ շահութահարկը, որը արդեն տասը տոկոս է դառնում, թե՛ գույքահարկը, որը չորս հարյուր տոկոսի է հասնում արդեն այս տարի, եւ թե՛ աղբահանությունը քառակուսի մետրով հաշվելը նրա համար են, որ մտնեն մեր քաղաքացիների գրպանը եւ հնարավորինս շատ գումար «քերեն» նրանցից: Տրանսպորտից օգտվում է խոցելի ու միջին խավը, գերշահույթներ ունեցողը, չեմ կարծում, որ տրանսպորտից օգտվի: Գնալ ու կպչել խոցելի խավին՝ որոշակի «բարոյականության» առկայության մասին է խոսում:

-Ինչպե՞ս եք պայքարելու թանկացման դեմ: Տարբեր հասարակական գործիչներ, ավագանու անդամներ արդեն իսկ սկսել են ակցիաներ իրականացնել: Ո՞ւմ եք միանալու Դուք:

-«Հայոց համազգային միասնություն» կուսակցությունը փետրվարի մեկից իրականացնելու է տարբեր միջոցառումներ՝ նպատակ ունենալով աջակցել քաղաքացիներին իրենց արդար որոշման մեջ: «100 եւ վե՛րջ» սկզբունքով մտնելու ենք պայքարի մեջ, որպեսզի դադարեցնենք այս ապիկար որոշումը:

Եթե հարցը գործող վարչակազմի շեշտածն է, թե լավ շարժակազմեր են բերել, ապա ոչ ոք չէր ասում՝ գնային MAN բերեին: Կարող էին փոխարենը բերել այնպիսի ավտոբուսներ, որոնք սպասարկելն ավելի հեշտ է: Ավտոբուսները դեռեւս նոր են, բայց եթե փչացան, ապա ինչպե՞ս են սպասարկելու:

Իշխանությունը, թեպետ սա ոչ թե քաղաքային իշխանությունն է, այլ իշխանական պարագլուխը, եթե փող է ման գալիս տրանսպորտի համար, ապա թող սուբսիդավորվի: Դա բոլոր երկրներում առկա եւ գործող տարբերակ է: Ավինյանն ասում էր, որ հավելյալ մուտքերը կլինեն հինգ միլիարդ, որ մի քիչ էլ կազմակերպված ու լավ աշխատեն, ապա մի 30-40 միլիարդ էլ այնտեղից դուրս կգա:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԱՎԱԳԱՆԻՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԿԱՆԻ

Երեւանի ավագանին հունվարի 31-ին արտահերթ նիստ է հրավիրել: ArmLur.am-ը տեղեկացավ՝ օրակարգում տրանսպորտի ուղեվարձի նոր սակագներն են լինելու:

Ինչպես Տիգրան Ավինյանը հայտարարեց, լսել, կարդացել են բազմաթիվ բողոքներն ու մեկնաբանությունները եւ որոշում կայացրել փետրվարի 1-ից ներդնել ուղեւորատոմսի նոր սակագին՝ 150 դրամ:

Հիշեցնենք նաեւ, որ Երեւանում հանրային տրանսպորտի ուղեվարձի նոր սակագներ կգործեն փետրվարի 1-ից: Երեւանի քաղաքապետարանը հանրային տրանսպորտից օգտվելու համար առաջարկում էր 8 տեսակի ուղետոմս:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԵԽԽՎ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏՈՒՄ

«Նոր աշխարհակարգի հաստատման համար աշխարհի բոլոր ազգերն ու երկրները ստիպված են ինչ-որ գին վճարել: Հայերը այդ գինը վճարեցին՝ ցեղասպանության ենթարկվելով 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում, այնուհետեւ նացիզմի դեմ պայքարում՝ ավելի քան 300,000 զինվորների կյանքով: Այդ ամենը նախորդ աշխարահակարգի հաստատման մեր վճարած գինն էր:

Մենք շատ թանկ գին ենք վճարել նաեւ նոր ձեւավորվելիք աշխարհակարգի համար, երբ 2020 թվականին առերեսվեցինք ադրբեջանական հերթական ագրեսիային, իսկ հետո արդեն էթնիկ զտման Լեռնային Ղարաբաղում: Սա չափազանց թանկ գին է մեր ազգի համար:

Մեզանից բոլորն այստեղ օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ են, եւ մենք քաջատեղյակ ենք, որ օրենքի առանցքը, կենտրոնը մարդիկ են, մարդ արարածը, ով հավատում է այդ օրենքի ուժին: Լեռնային Ղարաբաղի բնակչությունը հավատում էր միջազգային իրավունքի ուժին, բայց, ցավոք, Հայաստանի ներկա իշխանությունն ու աշխարհը խաբեցին ու դավաճանեցին՝ թողնելով մեն-մենակ բռնակալների դեմ պայքարում:

Աշխարհը չպետք է թույլ տա, որ պատմությունը կրկնվի. նոր աշխարհակարգը պետք է հիմնված լինի արժեքների ու օրենքների վրա, այլ ոչ թե նավթի ու աշխարհաքաղաքական շահերի: Կարող եք ասել, որ ես երազող եմ, բայց ես հավատում եմ, որ միակը չեմ:

Չկա աշխարհում որեւէ մի օրենք, որով հնարավոր լինի արդարացնել հայերի բանտարկությունն ու նվաստացումը Բաքվում: Չկա աշխարհում որեւէ մի օրենք, որով հնարավոր լինի արդարացնել Լեռնային Ղարաբաղի հայերի բռնի տեղահանությունն իրենց հայրենիքից: Չկա աշխարհում որեւէ մի օրենք, որն արդարացնի ամեն օր Ադրբեջանի ագրեսիայի վտանգի, սպառնալիքների ու ատելության մթնոլորտում ապրելը:

Մենք՝ հայերս, Քրիստոնյա աշխարհի դռնապաններն ենք: Մենք չպետք է մենակ մնայինք: Հավատացեք՝ մենք աշխարհի օգնության ու աջակցության կարիքն ունենք»:

ԵԽԽՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԸ

«Ընտրվել եմ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵԽԽՎ) Եվրոպական ժողովրդական կուսակցության խմբակցության փոխնախագահ»: Այդ մասին գրել է ԱԺ ՔՊ խմբակցության անդամ Վլադիմիր Վարդանյանը:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ ԱԺ ՔՊ խմբակցության անդամ Վլադիմիր Վարդանյանն ընտրվել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մարդու իրավունքների եւ իրավական հարցերի հանձնաժողովի արհեստական բանականության ենթահանձնաժողովի փոխնախագահ, իսկ Արուսյակ Ջուլհակյանը՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի փոխնախագահ, Սոնա Ղազարյանը վերընտրվել է ԵԽԽՎ ենթահանձնաժողովի փոխնախագահ:

ՔՊ-Ն ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՔԻՉ ՁԱՅՆԵՐ ԿՀԱՎԱՔԻ. Gallup

Եթե առաջիկա կիրակի օրը ընտրություններ լինեին, ապա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին պատրաստ են քվեարկել միայն հարցվածների 11.3 տոկոսը:

«GALLUP International Association»-ի՝ Հայաստանում լիիրավ անդամ «Էմ Փի Ջի»-ի ղեկավար Արման Նավասարդյանը, ներկայացնելով հունվարի 20-22-ը 1100 քաղաքացիների շրջանում իրականացված հարցումները, հայտնեց, որ սա 2018 թ.-ից ի վեր իրականացված հարցումների ընթացքում արձանագրված ռեկորդային մինիմալ ցուցանիշն է:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՆ-Ն ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ՄԵԿՆԵԼ Է ԹՈՒՐՔԻԱ

Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովն աշխատանքային այցով մեկնել է Թուրքիա: Այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվականները:

2025 թվականի հունվարի 29-ին Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը աշխատանքային այցով մեկնել է Անկարա՝ Ադրբեջանի, Թուրքիայի եւ Ուզբեկստանի արտաքին գործերի, էկոնոմիկայի/առեւտրի եւ տրանսպորտի նախարարների երկրորդ եռակողմ հանդիպմանը մասնակցելու նպատակով:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿԱՐՈՂ ԷՐ ՊԱՇՏՊԱՆԵԼ Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարող էր պաշտպանել ադրբեջանական բանտում գտնվող Ռուբեն Վարդանյանին, կարծում է ՌԴ նախագահին կից Քաղաքացիական հասարակության զարգացման եւ մարդու իրավունքների խորհրդի անդամ Եվա Մերկաչյովան, այս մասին փոխանցում է «Սպուտնիկ Արմենիան»:

Նրա կարծիքով՝ Փաշինյանը կարող էր աջակցել գործարար եւ բարերար Ռուբեն Վարդանյանին՝ հաշվի առնելով նրա ակտիվ մարդասիրական գործունեությունը Հայաստանում:

«Սակայն այսօր ՀՀ իշխանությունները որեւէ ջանք չգործադրեցին իրենց քաղաքացիներին պաշտպանելու համար: Ավելին՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունները ստիպում են մտածել, որ իրենց համար սա ավելի շատ քաղաքական մրցակցության խնդիր է, քան մարդկանց ճակատագրերի հարց»,- ասել է նա:

Մերկաչյովայի խոսքով՝ դատավարության մեկնարկի նախօրեին Վարդանյանը կրկին հայտարարեց իր եւ իր համախոհների անմեղության մասին եւ պահանջեց կարճել գործը: Մերկաչյովան նաեւ հիշեցրել է՝ քաղաքական գործիչը հայտարարել է, որ ինքը շուրջ մեկուկես տարի հետաքննությանը ոչ մի ցուցմունք չի տվել եւ ոչ մի արձանագրության տակ չի ստորագրել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՉՈՒ ԵՆ ՌԴ ԴԵՍՊԱՆԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՆ ԿԱՆՉԵԼ

Ադրբեջանում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Միխայիլ Եվդոկիմովը հունվարի 28-ին հրավիրվել է Ադրբեջանի ԱԳՆ:

Ադրբեջանի ԱԳՆ-ն հայտնել է, որ հանդիպման ընթացքում նշվել է, որ ռուսական մամուլում, ինչպես նաեւ ՌԴ որոշ պաշտոնատար անձանց կողմից ապատեղեկատվական բնույթ կրող հոդվածների հրապարակումն ու ռեպորտաժների տարածումը՝ ուղղված Ադրբեջանի դեմ, տարակուսանք են առաջացնում, ինչը հակասում է ՌԴ եւ Ադրբեջանի միջեւ դաշնակցային փոխգործակցության մասին հռչակագրի ոգուն ու տառին:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ 200 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԵԼ Է 4-ՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ

Մեծ Բրիտանիայում ավելի քան 200 ընկերություն մշտական հիմունքներով անցել է քառօրյա աշխատանքային ռեժիմի՝ առանց աշխատողների աշխատավարձի կորստի: Այս մասին հայտնում է The Independent-ը:

Նշված ընկերություններում աշխատում է շուրջ 5000 մարդ: Դրանք են առեւտրային կազմակերպություններ, տեխնոլոգիական ընկերություններ, ինչպես նաեւ տարբեր ոլորտների ձեռնարկություններ, այդ թվում՝ դիզայն, մեքենաշինություն եւ արտադրություն, հաշվապահություն ու բանկային: Քառօրյա աշխատանքային շաբաթի կողմնակիցները պնդում են, որ հնգօրյա աշխատանքային գրաֆիկը հնացած մոտեցում է, որն ավելի հարմար էր նախորդ տնտեսական դարաշրջանին: Քառօրյա գրաֆիկի հետեւորդների կարծիքով՝ այն կարող է բարելավել կյանքի որակը՝ պահպանելով կամ նույնիսկ բարձրացնելով արտադրողականությունը:

«Քառօրյա աշխատանքային ռեժիմը, որը տալիս է 50 տոկոս ավելի ազատ ժամանակ, մարդկանց հնարավորություն է տալիս ապրել ավելի երջանիկ եւ լիարժեք կյանքով: Հարյուրավոր բրիտանական ընկերությունների փորձը ցույց է տվել, որ այս գրաֆիկը կարող է շահավետ լինել ինչպես աշխատողների, այնպես էլ գործատուների համար»,- ասել է 4 Day Week Foundation-ի արշավի ղեկավար Ջո Ռայլը:

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ Է ԺԱՄԱՆԵԼ ԴԱՄԱՍԿՈՍ

Սիրիայի նախկին նախագահ Բաշար ալ-Ասադի վարչակարգի տապալումից հետո առաջին անգամ երկիր է այցելել Ռուսաստանի Դաշնության պատվիրակությունը: Այս մասին հայտնում են ռուսական լրատվամիջոցները:

Նշվում է, որ ռուսական պատվիրակության կազմում են Արտաքին գործերի փոխնախարար Միխայիլ Բոգդանովը եւ նախագահի հատուկ ներկայացուցիչ Ալեքսանդր Լավրենտեւը: Ռուսական ԶԼՄ-ների փոխանցմամբ՝ դիվանագետները ժամանել են Դամասկոս՝բանակցություններ վարելու Սիրիայի նոր ղեկավարության հետ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԱՏՄ-Ն ՆՈՐ ՆԱԽԱԳԾԵՐ ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐԻ

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) արդյունաբերական ճյուղերում համատեղ կոոպերացիոն նախագծերի ֆինանսավորման նոր մեխանիզմի շրջանակում կսուբսիդավորվեն առաջին երկու նախագծերը: Այս մասին հայտնել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի արդյունաբերության եւ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Գոհար Բարսեղյանը՝ մանրամասնելով, որ ԵՏՀ խորհուրդը հունվարի 22-ին կայացած նիստում հաստատել է երկու եռակողմ արդյունաբերական կոոպերացիոն նախագծերի սուբսիդավորման առաջին հայտերը:

«Խոսքը «Մուրոմյան սլաքային գործարան»-ի՝ Մոսկվա-Սանկտ Պետերբուրգ արագընթաց երկաթուղային մայրուղու շինարարության համար արտադրանքի թողարկման եւ «Kazrost Engineering Ltd» ընկերության՝ Ղազախստանի Հանրապետության տարածքում գյուղատնտեսական տեխնիկայի խցիկների արտադրության ընդլայնման եւ հավաքման տեղայնացման նախագծերին է վերաբերում: Մեխանիզմի հիմնական նպատակն է ստեղծել համատեղ կոոպերացիոն արժեքային շղթաներ, որոնք ուղղված են նոր արտադրական հզորությունների ստեղծմանը կամ առկա հզորությունների արդիականացմանը՝ Միության երկրների ներուժի օգտագործմամբ: Մեխանիզմը նախատեսում է սուբսիդավորել Միության բյուջեից ֆինանսական կազմակերպության կողմից արդյունաբերական նախագծի իրականացման համար ձեռնարկությանը տրամադրված վարկի կամ փոխառության տոկոսադրույքը՝ անդամ պետության կենտրոնական բանկի հիմնական տոկոսադրույքի 100%-ի չափով»,- նշել է Բարսեղյանը:

Համատեղ կոոպերացիոն նախագծերի ֆինանսավորման այս նոր փորձնական նախագիծը նախատեսված է 5 տարվա համար եւ իրականացվում է վերամշակող արդյունաբերության բոլոր ճյուղերում՝ բացառությամբ սննդի վերամշակման: Մեկ նախագծի համար սուբսիդավորման առավելագույն չափը չպետք է գերազանցի 350 միլիոն ռուբլին մեկ տարում, իսկ բանկերի վարկային տոկոսադրույքների առավելագույն սահմանը չի կարող գերազանցել անդամ պետության հիմնական տոկոսադրույքը՝ գումարած 6,5%:

Ըստ նրա՝ հաստատվել է նաեւ 64 բանկերի եւ 9 զարգացման ինստիտուտների ցանկ, որոնք իրավունք ունեն մասնակցելու այս մեխանիզմին (Հայաստանի դեպքում՝ 17 բանկ):

«Կոչ եմ անում հայկական բիզնեսին ավելի ակտիվորեն ներգրավվել նախագծերի մշակման գործընթացում: Հանձնաժողովի կողմից հաստատում եմ մեր պատրաստակամությունը աջակցելու բիզնեսի ցանկացած նախաձեռնությանը իրական հատվածում: Մենք պատրաստ ենք աջակցել հայկական ձեռնարկություններին՝ լրացուցիչ խորհրդատվություններ տրամադրելու, մեխանիզմի մանրամասները պարզաբանելու, ԵԱՏՄ-ի շրջանակում կապեր հաստատելու եւ գործընկերներ գտնելու գործում: Հուսով եմ, որ Հայաստանի բիզնեսը շուտով կդառնա եվրասիական կոոպերացիոն շղթաների մաս»,- ասել է ԵՏՀ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Գոհար Բարսեղյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳԾ ՊԵՏԻ ՆԱԽԿԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ՔՐԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

Գեներալ-լեյտենանտ Տիրան Խաչատրյանի գործով փաստաբանական թիմի անդամ Վարազդատ Հարությունյանն իր ֆեյսբուքյան էջում գրել է. «Գեներալ-լեյտենանտ Տիրան Խաչատրյանի գործով նախաքննությունն ավարտվել է, իսկ մեղադրական եզրակացությունն ուղարկվել է դատարան:

Այս փուլում միանշանակ հաստատվեց պաշտպանական թիմի այն պնդումը, որ Տիրան Խաչատրյանը ապօրինի է կալանավորվել դատարանի կողմից: Այսպես, Տիրան Խաչատրյանի կալանավորումը նախաքննական մարմնի եւ դատարանի կողմից հիմնավորվում էր ակտիվ քննչական գործողությունների կատարման անհրաժեշտությամբ, սակայն փաստացի առանց դրանց կատարման՝ ընդամենը 20 օր հետո գործը ուղարկվեց դատարան:

Չնայած նրան, որ քրեական վարույթի քննությունը ընթացել է 4 տարի, Տիրան Խաչատրյանը մեղադրվում է միջին ծանրության հանցագործության մեջ, 4 տարուց ավելի տեւող քննությանը Տիրան Խաչատրյանը որեւէ կերպ չի խոչընդոտել, մոտ են սույն գործի վաղեմության ժամկետների անցնելը եւ այն, որ այս մեղադրանքով Տիրան Խաչատրյանին ազատազրկում չի սպառնում՝ դատավոր Մասիս Մելքոնյանի որոշմամբ Տիրան Խաչատրյանն արդեն 24 օր գտնվում է ապօրինի կալանքի տակ:

Ինչ վերաբերում է Տիրան Խաչատրյանին առաջադրված մեղադրանքին, ապա այժմ, երբ նախաքննությունն ավարտված է եւ գործի բոլոր նյութերը պաշտպանական կողմի տրամադրության տակ են, կարող ենք վստահ պնդել, որ ոչ միայն չի հիմնավորվել Տիրան Խաչատրյանին առաջադրված մեղադրանքը, այլ հակառակը՝ հենց վարույթի նյութերում առկա ապացույցներով էլ հերքվում է այն:

Պաշտպանական կողմը պնդելու է, որ սպասվող դատական վարույթը իրականացվի դռնբաց ռեժիմով՝ ապահովելով դատավարության հրապարակայնությունը, որպեսզի հանրությունը նույնպես տեղեկացվի իրականության մասին:

Հիշեցնենք, որ բարձրագույն ռազմական կրթությամբ զինվորական, Արցախյան բոլոր պատերազմների մասնակից գեներալ-լեյտենանտ Տիրան Խաչատրյանը սույն թվականի հունվարի 4-ից ապօրինաբար զրկված է ազատությունից, եւ նրա նկատմամբ կալանքը կիրառվել է որպես իր քաղաքական եւ քաղաքացիական ակտիվ դիրքորոշումը ճնշելու եւ նրան պատժելու գործիք:

Գեներալ-լեյտենանտ Տիրան Խաչատրյանի պաշտպաններ՝

Արմեն Անդրիկյան,

Վարազդատ Հարությունյան»:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Հակակոռուպցիոն դատարանը Մամիկոն Ասլանյանին մեղավոր է ճանաչել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ պաշտոնեական կեղծիք կատարելու համար: Ասլանյանը դատապարտվել է 4 տարի 4 ամիս ազատազրկման, սակայն, հաշվի առնելով նրա կալանքի տակ գտնված ժամկետը, ազատազրկման վերջնական ժամկետը սահմանվել է 1 տարի 9 ամիս: Բացի այդ, նրան տուգանք է սահմանվել 500 հազար դրամի չափով, ինչպես նաեւ 3 տարի ժամկետով արգելվել է որեւէ պաշտոն զբաղեցնել: Փաստացի, ստացվում է, որ Մամիկոն Ասլանյանը 1 տարի 9 ամիս շարունակելու է մնալ իրավապահների տեսադաշտում:

Ըստ մեղադրանքի՝ Վանաձորի նախկին քաղաքապետը պաշտոնավարման տարիներին կեղծ փաստաթղթեր կազմելու միջոցով հողեր է օտարել, ինչը դիտարկվել է որպես ապօրինի գործարք:

Մամիկոն Ասլանյանը կալանավորվել էր 2021 թվականի դեկտեմբերին: 2024 թվականի հուլիսին դատարանը նրան 10 միլիոն դրամ գրավի դիմաց ազատ արձակելու որոշում էր կայացրել: Մամիկոն Ասլանյանը հերքել է իրեն առաջադրված մեղադրանքը՝հայտարարելով, որ իր նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՉ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ԵՆ ԵՂԵԼ ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՕՐՈՒՄ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունվարի 27-ից 29-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 174 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված: Այս մասին հայտնում են ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից:

Մասնավորապես՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 45, թմրանյութի հայտնաբերման՝ 33, ֆիզիկական ներգործության՝ 11, հոգեկան ներգործության՝ 9, խարդախության՝ 8, մարմնական վնասվածք պատճառելու՝ 7, սառը զենքի հայտնաբերման՝ 6, պաշտոնեական լիազորությունների չարաշահման՝ 5, անձնական ունեցվածքի գողության՝ 4, զենք-զինամթերքի առգրավման, թմրանյութի իրացման, կեղծ փաստաթղթի, ինքնիրավչության ու վարժական հավաքից խուսափելու՝ 3-ական, գույքը ոչնչացնելու կամ վնասելու ու անձին ազատությունից զրկելու՝ 2-ական, խոշտանգման, մարդու առեւանգման, վստահված գույքի հափշտակման, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության, ծառերը, թփերը ապօրինի հատելու, բնակարանային գողության, շորթման, խուլիգանության, բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտավորությունները չկատարելու, փաստաթուղթ կեղծելու եւ ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքի, թմրամիջոցի մաքսանենգության, ինքնիրավչության, վտանգավոր քիմիական կամ կենսաբանական նյութերի կամ թափոնների հետ վարվելու կանոնները խախտելու, դատավարության մասնակիցների լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, փաստաթղթեր կամ պետական պարգեւներ կամ պատվավոր կոչումներ ապօրինի ձեռք բերելու կամ իրացնելու, խղճի կամ դավանանքի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելու, դատական ակտը չկատարելու, գերեզմանն անարգանքի ենթարկելու, ինքնասպանության հասցնելու, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու եւ ինքնավնասման՝ 1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության՝ 2, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, բնակարանային գողության, մարմնական վնասվածք պատճառելու եւ խարդախության՝ 1-ական դեպք:

Հայտնաբերվել է 11 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 4-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 6 դեպք:

Անցած 2 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 1 մարդ զոհվել է, 14 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԸՆՏՐՎԻ՞ ՎԵՐՋԱՊԵՍ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Կառավարությունը հերթական անգամ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ ընտրելու համար հայտարարեց հերթական մրցույթ:

Հիմք ընդունելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի պահանջները՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհուրդը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների (այսուհետ՝ Թեկնածու) ընտրության համար հայտարարում է մրցույթ:

Փաստաթղթերը կարող են հանձնվել առձեռն, մինչեւ ս.թ. փետրվարի 6-ը՝ ժամը 18:00-ն ներառյալ: Նկատենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության համար երկրոդ անգամ է անցկացվում մրցույթ, քանի որ առաջին մրցույթում միակ թեկնածու Ռաֆայել Երիցյանը չհաղթահարեց մրցույթի արդյունքները եւ չընտրվեց: Մրցույթը բավականին թեժ անցավ, անգամ հանձնաժողովի անդամները լարված խոսակցություններ ունեցան: Ինչեւէ սպասենք,թե հերթական անգամ ինչ է սպասվում ու ովքեր ցանկություն կհայտնեն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ դառնալու, որի (արդեն նախկին) նախագահին մի գիշերվա մեջ SMS-ի արդյունքում ազատեցին պաշտոնից:

ՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՅԵԼՈՒ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱ

2024 թվականի դեկտեմբերի 24-ին մի խումբ քաղաքացիներ ակցիա էին իրականացրել Երեւանում ու պահանջում էին, որ իրավապահները քայլեր ձեռներկեն ու հայտնաբերեն հանցագործներին, որոնք կողոպտել են իրենց «Mazda» մակնիշի մեքենաները: Արդյունքում, իրավապահները ակցիայից սթափվեցին ու այժմ կալանավորված կա:

Սերյոժա Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2024թ. հուլիսի 17-ին՝ ժամը 00:08-ի սահմաններում, գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ Երեւան քաղաքի Օհանովի փողոցի 4-րդ շենքի դիմաց կայանված ավտոմեքենայից հափշտակել է զույգ կողային հայելիները, բացի դրանից, 2024թ. նոյեմբերի 20-ից նոյեմբերի 21-ն ընկած ժամանակահատվածում ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ չորս տարբեր ավտոմեքենաներից գաղտնի հափշտակել է կողային եւ հետին տեսանելիության հայելիներ: Գործը դատարանում է:

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն է դիմել Արմավիրի բանտի դատապարտյալ Էդուարդ Ջեյթունյանի կինը՝ Լալա Բեռնեցյանը, եւ արդարություն է պահանջում ՀՀ իրավապահներից:

Լալա Բեռնեցյանի ամուսինը՝Էդուարդ Ջեյթունյանը, իրավապահների տեսադաշտում էր հայտնվել 2016 թվականին Սարի թաղում ոստիկանների եւ քաղաքացիների միջեւ բախումների ժամանակ:

Թաղամասի էլեկտրականությունը, գազն ու ջրամատակարարումը վերականգնելու պահանջով փողոց դուրս եկած տասը սարիթաղցիներ ճաղերի հետեւում էին հայտնվել՝ ոստիկանի նկատմամբ վտանգավոր բռնություն գործադրելու մեղադրանքով, սակայն հեղափոխությունից հետո համաներմամբ ազատ էին արձակվել:

Արդյունքում, այսօր Լալա Բեռնեցյանի ամուսնուն ցանկանում են խիստ պատժի տանել՝2020 թվականի 44 -օրյա պատերազմի ժամանակ մարտական դիրք 2 օր ուշ ներկայանալու համար. «Մենք այսքան քայլեցինք, պայքարեցինք, որ սրանք գան մեր կաշիները քերթե՞ն, ո՞ւր է ձեր արդարությունը, Արցախը հանձնածները, Շուշիի դարպասները թշնամու առաջ բացողները ազատության մեջ են, անտեր մարդկանց են դատում»:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐՈՂ ԵՆ ԶՐԿԵԼ ԴԱՏԱՎՈՐԻ ԹՈՇԱԿԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նախկին դատավոր Ալեքսեյ Սուքոյանին կարող են զրկել իրեն հասանելիք դատավորի թոշակից:

Դատավորի որդին՝Արթուր Սուքոյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Վարչական վերաքննիչ դատարանը որոշեց, որ հայրս՝ նախկին դատավոր Ա. Սուքոյանը, պետք է զրկվի իրեն հասանելիք դատավորի թոշակից: Դա այն դեպքում, երբ նա 25 տարի աշխատել է որպես դատավոր, երբեւիցե նույնիսկ նկատողություն չի ստացել եւ ընդամենը մեկ ամիս առաջ՝ մինչեւ թոշակի անցնելը, Կարեն Անդրեասյանի գլխավորած ԲԴԽ-ի որոշմամբ ազատվել է աշխատանքից: Եթե առաջին ատյանի դատարանը ճանաչել էր նրա աշխատանքային ստաժը, ապա վերաքննիչը որոշեց, որ այդ 25 տարիները իբր գոյություն չեն ունեցել, նրա աշխատանքը հօդս է ցնդել, ուստի նա չի վաստակել այդ թոշակը: Ես շատ բան չեմ ուզում, պարզապես թող այդ դատավորները բախվեն այն «արդարադատությանը», որը հենց իրենք են իրականացնում, բայց չգիտեմ՝ ցավով թե հուրախություն ասեմ, որ նրանք էլ չեն բախվի, քանի որ կգա ժամանակը, երբ ՀՀ-ում էլ պատվերներով, զանգերով եւ ՍՄՍ-ներով որոշումներ չեն կայանա: Բայց թող գոնե մեկ վայրկյան մտածեն, թե ինչ է նշանակում տարիների նվիրումից հետո կանգնել անօրինականության ու անտեսված արդարության առաջ»:

«ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂ»–Ը ՓՈՂ Է ՈՒՂԱՐԿԵԼ ԲԱՆՏԵՐ

Արթուր Սուրենի Աղվանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, մասնակցելով քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «օրենքով գող» կարգավիճակ ունեցող Արման Ջանինյանի կողմից ղեկավարվող քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման նպատակով Արման Ջանինյանի հանձնարարությամբ 2023-2024 թվականների ընթացքում՝ տարբեր ժամանակահատվածներում, իրականացրել է դրամական միջոցների հավաքագրում, ինչի արդյունքում ձեռք բերված անօրինական եկամուտը տնօրինվել է քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «օրենքով գող» կարգավիճակ ունեցող Արման Ջանինյանի կողմից եւ ուղղվել ՀՀ-ում գտնվող տարբեր կալանավայրեր: Ծնունդով Հայաստանի Ալավերդի քաղաքից Արման Ջանինյանը, ով քրեական աշխարհում հայտնի է Արման Կալուժսկի մականունով, «օրենքով գող» է կարգվել 1996 թ.-ին Մոսկվայում՝ կալանավայրից դուրս գալուց հետո:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունվարի 27-ից 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 174 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

7 ՀԱ ԱՇՆԱՆԱՑԱՆ

Հունվարի 27-ին Իջեւան համայնքի ավագանին 15 կողմ, 3 դեմ քվեներով որոշել է հավանություն տալ Տավուշի մարզի Տավուշ-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված Իջեւան համայնքի Կիրանց բնակավայրի գլխավոր հատակագծի (կենտրոնական մասի վերակառուցման, եւ նոր կառուցվող թաղամասի մանրամասն գոտեւորման)մաստեր պլանի՝ հասարակական, բնակելի կառույցների էսքիզային առաջարկների ներառմամբ) նախագծման առաջադրանքին: Կիրանց գյուղից տեղեկացել ենք, որ պետության կողմից մինչեւ 21 միլիոն դրամ վարկային աջակցությամբ 15 առանձնատուն է կառուցվում, եւս 40-ը նախատեսվում է առաջիկայում կառուցել: 2024 թ.-ին սահմանազատման անվան տակ Կիրանցից հողերի հանձնումից հետո Կիրանցում դժվարացել է հողերի մշակությունը: 2024-ին Կիրանցում հնձվել է 38 հեկտար աշնանացան, այժմ, ընդհանուր առմամբ, տարբեր տեղերում ընդհանուր մոտ 7 հեկտար աշնանացան ցորեն ու գարի է ցանվել: Հարց է, թե սահմանագոտում ինչպես է կատարվելու հացահատիկի հունձը, ադրբեջանական զինուժը չի՞ խանգարելու դրան:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է 216 ԸՆՏԱՆԻՔ

Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ 2023 թվականի աշնանը Արցախից բռնագաղթածներից Տավուշում բնակություն է հաստատել 2970 անձ (780 ընտանիք): Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին մեր թղթակիցը հարցում է արել ներկայումս Տավուշում բնակվող արցախցիների թվի վերաբերյալ: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզում 2025 թվականի հունվարի 8-ի դրությամբ կա ԼՂ-ից բռնի տեղահանված 564 ընտանիք (1920 անձ)»: Անցած ժամանակաշրջանում Տավուշից հեռացել է 216 ընտանիք, 1050 անձ: 2024 թվականի դեկտեմբերին Տավուշի մարզպետարան մեր թղթակիցը հարցում էր կատարել՝ մարզում հաստատված արցախցիների վերաբերյալ: Այն ժամանակ մարզպետարանից հայտնել էին, որ Տավուշում բնակվող բռնագաղթած արցախցիներից աշխատանք ունի ընդամենը 36-ը, Արցախից բռնագաղթվածները մարզում սեփականության իրավունքով բնակարաններ չեն գնել:

42 ԴՊՐՈՑ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ՀՐԱՏԱՊ ՆՈՐՈԳՄԱՆ

Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ մարզի հանրակրթական 76 դպրոցներից 10-ի շենքերը կարիք ունեն հիմնանորոգման, 32-ը՝ վերանորոգման կամ մասնակի նորոգման: Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ 2025 թվականին նախատեսվում է վերանորոգել Տավուշի մարզի 5 դպրոց (Սարիգյուղ, Ջուջեւան, Թեղուտ, Տավուշ, Կայանավան): Եթե նկատի ունենանք, որ պետական ծրագրերը նախատեսված թվից պակաս են իրականացվում, ծրագրերն էլ՝ նախատեսված ժամկետի խախտմամբ, տարիներով ձգձգվում են, Տավուշի հանրակրթական դպրոցների շենքերի վիճակն այս տարի էապես չի բարելավվելու:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՐԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՓՈԴՔԱՍՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՎԱԶՈՒՄ Է

2024 թ.-ի տարեվերջին լայվերի եւ ստատուսների սիրահար Նիկոլ Փաշինյանն ու կինը՝ Աննա Հակոբյանը, սկսեցին համատեղ փոդքաստերի շարք հենց Կառավարական առանձնատնից:

Մինչ օրս Նիկոլ Փաշինյանն ու Աննա Հակոբյանը հրապարակել են ընտանեկան փոդքաստի 4 թողարկում, որոնց ընթացքում իշխանական զույգը անդրադարձել է իրենց հասցեին տարածված քննարկումներին, Աննա Հակոբյանին սպասարկող մեքենաներին եւ փորձում էին հանրությանը հրամցնել իրական եւ պատմական Հայաստանի մասին իրենց պատկերացումները: Նիկոլ Փաշինյանն այնքան կարեւորություն էր տալիս իր փոդքաստներին, որ անգամ դրանց միջոցով արձագանքում էր Ալիեւի՝ Հայաստանի հասցեին հնչեցրած սպառնալիքներին:

Որքան էլ Նիկոլ Փաշինյանն ու կինն իրենց սոցցանցերի դիտելիության ցուցիչները հրապարակեն՝ իբրեւ հետաքրքրությունը իրենց ընտանիքի հանդեպ գնալով մեծանում է, թվերն այլ բանի մասին են խոսում:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ հանրության հետաքրքրությունը գնալով նվազում է Նիկոլ Փաշինյանի եւ Աննա Հակոբյանի փոդքաստների նկատմամբ:

Այսպիսով՝ Նիկոլ Փաշինյանի եւ Աննա Հակոբյանի փոդքաստի առաջին թողարկման դիտումները 35.000 էին, երկրորդ թողարկման դիտելիությունը միանգամից իջել էր 18 000-ի:

Իշխանական զույգի երրորդ փոդքաստը դիտել է 12.000 հոգի, իսկ վերջին թողարկումը՝ 11.000 հոգի:

Այսինքն, եթե փոդքաստի առաջին թողարկումը հանրության շրջանում բուռն քննարկվեց, ինչն էլ իր հերթին ապահովեց թողարկման դիտելիությունը, ապա արդեն մյուս թողարկումների նկատմամբ հանրության հետաքրքրությունը գնալով նվազել է:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ՇՈԿՈԼԱԴԸ ՄԻ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ ԿԹԱՆԿԱՆԱ

Կլիմայի փոփոխության հետեւանքով կակաո աճեցնող խոշոր երկրներում՝ Գանայում եւ Կոտ դը Իվուարում, հատիկավոր կակաոյի բերքի ծավալները կտրուկ նվազել են: Կակաոյի ծայրահեղ դեֆիցիտը հանգեցրել է գների շեշտակի բարձրացման: 2024 թ.-ի տարեվերջի տվյալներով՝ կակաոն պատմության մեջ ամենաբարձր գինն է գրանցել:

Վերջին 2 տարում կակաոյի 1 տոննայի գինը ավելի քան 5 անգամ բարձրացել է՝ 2 200 ԱՄՆ դոլարից դառնալով 12 000 ԱՄՆ դոլար: Ըստ փորձագիտական հաշվարկների՝ առաջիկա 1 տարվա ընթացքում շոկոլադի արժեքն ավելի քան 100 տոկոսով կբարձրանա: Եվրոպական եւ ամերիկյան հրուշակեղեն արտադրող խոշոր ընկերություններն արդեն բարձրացրել են իրենց շոկոլադի գները ավելի քան 20 տոկոսով, չի բացառվում, որ այս տարի կրկին կլինեն թանկացումներ:

Բիզնեսը կառավարելի դարձնելու համար ընկերություններից յուրաքանչյուրը դիմում է տարբեր քայլերի: Մի մասը պատրաստվում է արտադրատեսակների մեջ կակաոյի պարունակությունը նվազեցնել, մյուսները խոստովանել են, որ կակաոյի փոխարեն հնարավոր է այլ բաղադրիչներ օգտագործեն կամ գինը թողնեն նույնը, սակայն հատով վաճառվող շոկոլադի չափը փոքրացնեն: Շոկոլադասերներին նոր փորձություն է սպասվում: Սպառողը պետք է հնարավորինս ուշադիր լինի, քանի որ անբարեխիղճ շատ արտադրողներ կակաոյի անվան տակ կարտադրեն արմավի յուղով եւ այլ փոխարինող բաղադրիչներով շոկոլադներ:

ՄԻ ՇԱՐՔ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ ՎԱՃԱՌՔԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթը նկատել է, որ վերջին շրջանում Հայաստանում շատ դեղամիջոցներ դուրս են եկել վաճառքից:

«Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց, ինչից պարզ դարձավ՝ խնդիրը ավելի խորքային է, քան կարելի է պատկերացնել:

Հայաստանում դեղերի գրանցումը դարձել է անհասկանալի. մատակարարող ընկերություններից անհասկանալի բաներ են պահանջում՝ ստեղծելով տեխնիկական խնդիրներ: Ընկերությունները պատասխանում են, որ հայաստանյան շուկան իրենց համար անհետաքրքիր է ու հրաժարվում են համագործակցությունից:

Արդեն բրենդային դարձած շատ ընկերություններ դադարեցրել են համագործակցությունը Հայաստանի Հանրապետության հետ՝ դրանով իսկ նպաստելով նրան, որ Հայաստանում դեղերի սակավություն է նկատվում:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց առողջապահության մամուլի քարտուղար Մարիամ Ծատրյանի հետ՝ մեկնաբանություն ստանալու նպատակով: Վերջինս «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց. «Չգիտեմ, թե որ ընկերություններն են հրաժարվել համագործակցությունից, բայց նշեմ, որ բացի ԵԱՏՄ ընթացակարգերից մենք նաեւ ազգային ընթացակարգեր ենք մշակել, ազգային գրանցումներ ենք մտցրել եւ բավականին դիմողներ ենք ունեցել, բավականին հայտեր են գրանցվել, մենք վերանայել ենք օրենսդրությունը, դրա մեջ ենք փոփոխություններ իրականացրել, թեթեւացրել ենք նաեւ գնային քաղաքականությունը. որեւէ բողոք չենք լսել, եւ եթե կա բողոք, որ խիստ դժգոհություն է հայտնում, թող տեղյակ պահեն առողջապահության նախարարությանը»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի՝ Լոռու մարզի Սպիտակ համայնքի վարչական տարածքում արդյունաբերական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 0,43 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2025 թվականի փետրվարի 3-ին՝

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

● *Անցած 2 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 1 մարդ զոհվել է, 14-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Հասմիկ Վանիչկայի Գրիգորյանին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ՀՀ, Երեւան, Կենտրոն Զրաշատ փողոց 62 շենք, 13 հասցեում գտնվող 142,3 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 102400000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.02.2025թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am , www.borsa.am կայքերը:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԹԵԼ-ՍԵԼ»-Ի ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ

2024 թվականի դեկտեմբերի 30-ին «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն մուտք գործեց Հայաստանի ֆոնդային բորսայի բաժնետոմսերի շուկա՝ դառնալով 12-րդ ցուցակված ընկերությունը: Ընկերությունը ցուցակեց իր բաժնետոմսերը բորսայի երկրորդային (B) ցուցակում՝ ապահովելով նոր մակարդակի հասանելիություն ներդրողների լայն շրջանակի համար:

«Թել-Սել» ԲԲԸ-ն Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակել է շուրջ 1.2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով եւ 35 ՀՀ դրամ անվանական արժեքով 34,650,000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսեր: Վերոնշյալ բաժնետոմսերով թույլատրվել է հասցեական առեւտուրը եւ ռեպո գործարքների կնքումը: Ցուցակված բաժնետոմսերի մասին կարող եք իմանալ ավելին՝ այցելելով «Թել-Սել» ընկերության կայք:

Ցուցակման առաջին ամսվա ընթացքում Ընկերության կապիտալիզացիան աճել է 4.75%՝ 13,860,000,000 ՀՀ դրամից դառնալով 14,518,350,000 ՀՀ դրամ: Ավելին, ընկերությունը նախատեսում է ցուցակումից հետո երեք ամիսների ընթացքում լրացուցիչ որոշմամբ հաստատել համապատասխան կարգը՝ մինչեւ 350,000 հատ բաժնետոմսը աշխատակիցներին առաջարկելու եւ/կամ բաժնետիրացման ծրագրի շրջանակներում վերջիններիս տրամադրելու վերաբերյալ:

«Թել-Սել» ԲԲԸ-ի բաժնետոմսերի հրապարակային առաջարկի (IPO) գործընթացը մեկնարկել էր 2024 թվականի սեպտեմբերի 18-ին եւ ավարտվել նոյեմբերի 30-ին: Ընդհանուր առմամբ, թողարկվել են 1,540 միլիոն դրամ արժողությամբ 3,850,000 հատ բաժնետոմսեր, որոնք ամբողջությամբ տեղաբաշխվել են: Բաժնետերերի եւ անվանատերերի թիվը կազմել է 3,631: Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացրել է «Արմբրոկ» ԲԲԸ-ն:

«Թել-Սել» ԲԲԸ բաժնետոմսերը կարող եք ձեռք բերել Հայաստանի ֆոնդային բորսայի անդամների միջնորդությամբ՝ բացելով բրոքերային հաշիվ եւ ներկայացնելով բաժնետոմսերի ձեռք բերման հայտ:

Հայաստանի ֆոնդային բորսայի գլխավոր տնօրեն Հայկ Եգանյանն ընդգծել է. «Թել-Սել» ԲԲԸ-ի ցուցակումը Հայաստանի ֆոնդային բորսայում կարեւոր քայլ է ոչ միայն ընկերության զարգացման, այլեւ կապիտալի շուկայի ընդլայնման տեսանկյունից: Մեր նպատակն է շարունակաբար աջակցել հայկական ընկերություններին՝ նոր ֆինանսավորման աղբյուրներ ապահովելու եւ ներդրողների համար նոր հնարավորություններ ստեղծելու միջոցով»:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանը նշել է. «Ուրախ եմ եւ հպարտ, որ մեր ընկերության բաժնետեր դառնալու առաջարկն այդչափ հետաքրքրություն առաջացրեց շուկայում եւ նախանշած ժամկետից շուտ սպառվեցին բաժնետոմսերը: Սա փաստում է նրա մասին, որ Telcell ընկերության գրանցած տարիների կայուն աճը վստահություն ու հավատ է ներշնչել մեր ապագա բաժնետերերի մոտ, ինչը ոչ միայն ոգեւորիչ է, այլեւ պարտավորեցնող: Telcell ընկերությունը միշտ կարողացել է պահպանել առաջատար դիրքերը խիստ մրցակցային դարձած շուկայում եւ դիվերսիֆիկացրել պորտֆելը մի շարք ռազմավարական ուղղություններով՝ ստեղծելով էկոհամակարգային բիզնես: Ի դեպ, վճարահաշվարկային ոլորտում Telcell-ն առաջինն է Հայաստանում, որ իրականացրել է IPO (Initial Public Offering- նախնական հրապարակային առաջարկ) եւ թողարկել բաժնետոմսեր: Սա եւս խոսում է նրա մասին, որ Telcell-ը ձգտում է դառնալ առավել բաց ու թափանցիկ»:

«Թել-Սել» ԲԲԸ-ն հանդիսանում է Հայաստանում վճարահաշվարկային եւ հարակից ծառայություններ մատուցող առաջատար ընկերություններից մեկը, որը գործում է շուկայում արդեն 17 տարի: Ընկերությունը Հայաստանում առաջինն է տեղադրել վճարային տերմինալներ, որոնց թիվը ներկայումս գերազանցում է 4,500-ը: Մինչ այսօր ընկերությունը շարունակում է իր շարունակական զարգացման ծրագիրը եւ իր հաճախորդներին տրամադրում նոր վճարահաշվարկային լուծումներ:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Մխիթար Դավիթի Ասադյանս, դեկտեմբերին Կենտրոն վարչական շրջանում կորցրել եմ «կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսի դիպլոմս (AM № 037921՝ տրված 2013 թվականի հունիսի 18-ին Եվրասիա միջազգային համալսարանի կողմից):

Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 41 073 776 հեռախոսահամարով:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ ԱՊՐԻԼԻՑ

Արցախցիները «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն են ահազանգում այն մասին, որ ապրիլից այլեւս 50 հազար դրամ օգնությունը չեն ստանալու. այս մասին իրենց տեղեկացրել են աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Իսկ բնակարային ապահովման 3-րդ փուլում ընդգրկված ընտանիքների համար ծրագրի մեկնարկը լինելու է 2027 թվականից:

«Ժողովուրդ» օրաթերթին դիմած քաղաքացին մտահոգվում է՝ ասելով, թե ինչ պետք է անի այդ ընթացքում, երբ պետությունը չի փախհատուցում վարձի գումարը, չունեն աշխատանք, իսկ բնակարանը 2027 թվականից հետո նոր կարող են շահագործել:

Արդյունքում, ստացվում է, որ արցախցին մնացել է միայնակ, եւ այն արցախցիները, ովքեր չունեն հնարավորություն վարձը վճարելու, մնալու են դրսում:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի մամուլի քատուղար Զառա Մանուչարյանի հետ՝ մեկնաբանություն ստանալու նպատակով: Վերջինս մեզ հետ զրույցում նշեց. «Մենք կեցության եւ այլ ծախսերը հոգալու համար իրականացրել ենք մի ծրագիր՝ 40 + 10, որը նախորդ տարվանից գործել է, ծրագիրը շարունակվել է մի քանի թիրախների համար»:

Տրամադրված հղումից տեղեկանում ենք, որ թիրախային խումբ են համարվում՝

մինչեւ 18 տարեկան երեխաներ կամ պարտադիր կրթություն ստացող 18 տարին լրացած անձինք,

63 եւ ավելի տարեկաններ,

կերակրողին կորցրածներ կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինքս:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 101

ՄԱՐԴ ԿԱ՝ ԱՇԽԱՐՀՆ Է ՇԱԼԱԿԱԾ ՏԱՆՈՒՄ...

Հայ ազգը մեծանուն մարդկանց դակաս չունի, եւ կարելի է ասել, որ դա հայ ազգի այցեքարտերից մեկն է:



Հայ մեծերից Պարույր Սեւակը 1950-1960-ական թվականների հայ պոեզիայի առաջատարն է, ում տողերը մինչ այժմ էլ շարունակում են մնալ արդիական: Սեւակի հատկապես սիրային ստեղծագործությունները անտարբեր չեն թողնում մարդկանց եւ կարող են այնպես փոթորկել հոգին, որ երկար ժամանակ հնարավոր չլինի հասկանալ, թե ինչ է կատարվում:

Այս տարի հունվարի 24-ին նշվեց մեծանուն գրողի 101-րդ տարեդարձը:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է գրողի կյանքից հետաքրքիր դեպքեր:

Պարույր Սեւակը տան միակ երեխան էր, եւ նաեւ դրա շնորհիվ է վայելել ծնողների մեծ սերն ու ջերմությունը: Սեւակը մեծագույն սիրով էր սիրում իր մորը, ում անվանում էր Ազի: Ավելի ուշ Պարույր Սեւակը իր մոր մասին գրել է. «Իմ մայրը մի կին էր, որի համար դժբախտության հասկացողությունը անհասկանալի մնաց ամբողջ կյանքում: Ամբողջ կյանքում նա իրեն դժբախտ է համարել, այդքանով էլ, իսկապես, դժբախտությունը՝ ահավոր ճշտությամբ ապրելուց հեռու մնալով: Նրա համար դժբախտություն էր խոտը ուշ դեզելը, թեյի գդալների պակասը, ամանի ջարդվելը, պարանի կորչելը: Բանաստեղծական հոգի էր նա, աշխարհը ողբերգականորեն վերապրող, անհանգիստ, անհագ հոգի, որքան, իհարկե, զորում էր նրա գեղջկական՝ պարզ, ոչնչով չաղարտված արտաքին էությունը: Ես նրանից ժառանգել եմ չափազանց շատ, այնքան շատ, որ մեծագույն մասով փոխարկվել է ուղիղ հակադրության»:

Պարույր Սեւակը գրել եւ կարդալ սկսել է 5 տարեկանից, դպրոցի ուսուցիչը, նրա ունակությունները նկատելով, թույլատրել է Պարույրին օրինական ձեւով հաճախել դպրոց՝ անուն-ազգանունը գրանցելով դպրոցական մատյանում:

Պարույր Սեւակի ազգանունը Ղազարյան է: Նրան Սեւակ ազգանունով կնքել է արվեստաբանության դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Զարյանը, որը պատմել է հետեւյալ պատմությունը. «Պատերազմի տարիներին խմբագրում էի ամսագիրը: Բանաստեղծների ծաղկեփունջը չկար: Եվ բանաստեղծական այդ ամլության մեջ ինձ համար հայտնություն էին դեռ պատանի Պարույր Ղազարյանի բանաստեղծությունները: Կարդալուց հետո մտածեցի ոչ միայն անմիջապես տպագրելու, այլ նաեւ գեղջուկ այդ բանաստեղծին մի իսկական բանաստեղծական անուն շնորհելու մասին: Եվ սկսեցի ասել՝ Պարույր Սեւակ, Պարույր Սեւակ: Չէ՛, շատ լավ է հնչում» Այս կեղծանունը տրվեց ի պատիվ արեւմտահայ բանաստեղծ Ռուբեն Սեւակի: Ինչ վերաբերում է անվանակոչությանը. գրողի անունը տվել է նրա կնքահայրը՝ այգեգործ Խաչատուր Մադոյանը՝ Մադոյենց Խաչատուրը, որը նորածնի անունը Պարույր է դրել՝ ի պատիվ նույնանուն սպայի, որի զինվորն էր եղել ինքը:

Այսպիսով էլ հայ ազգն ունեցավ մեծանուն բանաստեղծ, անզուգական Պարույր Սեւակին:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է նաեւ գրողի հուշերից:

«-Էսքան որ կարդում ես, աչքերիդ մեռնեմ, ի՞նչ պիտի դառնաս. վարժապե՞տ:

-Բա ի՞նչ,- պատասխանում էի ես:

-Ոնց որ էս բոլոր վարժապետնե՞րը:

-Բա ոնց:

-Էհ, կուրանամ ես, չելա՛վ...

-Բա ի՞նչ կուզեիր, որ լինեմ:

Մայրս, ինչպես ասացի, անգրագետ էր: Նա, բնական է, չգիտեր ո՛չ «գրող», ո՛չ էլ «բանաստեղծ» բառերը: Բայց նա ակամա լսում էր իմ ու քրոջս բարձրաձայն ընթերցանությունը, ուստի եւ գիտեր, օրինակ, Գիքորի տխուր պատմությունը: Այն ժամանակ նա տակավին միտը չէր պահել նույնիսկ Հովհաննես Թումանյանի անունը: Ուստի եւ իմ «Բա ի՞նչ կուզեիր, որ լինեմ» հարցին պատասխանում էր.

-Էսքան որ կարդում ես, գոնե դառնայիր էն «Գիքորը» գրողի պես մարդ:

Ես՝ գաղտնիքս մեծ - ինքս փոքրիկ, արդեն վաղո՛ւց համոզված էի (ո՛չ թե երազում էի, այլ համոզված էի), որ դառնալու եմ «էն «Գիքորը» գրողի պես մարդ», այսինքն՝ գրող կամ բանաստեղծ: Բայց այդ մասին գիտեի լոկ ես ու մեկ էլ... Աստված: Եվ կյանքիս առաջին մեծ զարմանքն էր, թե որտեղի՞ց մայրս իմացավ այն, ինչ հայտնի է միայն Աստծուն: Այն ժամանակ ես չգիտեի, որ եթե բանաստեղծները Աստծու հետ ունեն միջնորդված առնչություն, ապա նրանց մայրերը Աստծուն հաղորդակից են անմիջապես...»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՆՅՈՒԴԱՐՁ

ChatGPT–Ի ՉԻՆԱԿԱՆ ՄՐՑԱԿԻՑԸ ԽՈՒՃԱՊ Է ԱՌԱՋԱՑՐԵԼ

Չինական DeepSeek ընկերությունը թողարկել է անվճար չաթբոտ, որը խուճապ է առաջացրել Սիլիկոնային հովտում ներդրողների շրջանում, ինչպես նաեւ մի շարք թեստերում գերազանցել է ամերիկյան Open AI ընկերության ChatGPT արհեստական բանականության հավելվածը, գրում է bbc.com-ը:

Արհեստական բանականության չինական DeepSeek-R1 հավելվածը դարձել է ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում եւ Չինաստանում Apple App Store-ի ամենաբարձր վարկանիշ ունեցող անվճար հավելվածը:

Դրա շուրջ առաջացած մեծ հետաքրքրությունը փաստացի մարտահրավեր է նետում լայն տարածում գտած համոզմունքին, որ ԱՄՆ-ն արհեստական բանականության ոլորտում անվիճելի առաջատարն է:

ԱՄՆ ռազմածովային ուժերի աշխատակիցներին արգելվել է թե՛ անձնական, թե՛ գործնական հարցերում օգտվել չինական նոր DeepSeek արհեստական բանականության հավելվածից՝ «դրա օգտագործման հետ կապված անվտանգության հնարավոր խնդիրների պատճառով», գրում է cnbc.com-ը:

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Մեկնարկել է 2024-2025 ուսումնական տարվա «Հայկական համադպրոցական գիտության փառատոն-2025» մրցույթի հայտերի ընդունումը:

Բոլոր հայտերն ընդունվում են առցանց՝ https://assf-2025.hesc.am/ կայքի միջոցով, որտեղ կարելի է ծանոթանալ մրցույթի պայմաններին:

Գրանցման վերջնաժամկետն է 2025 թվականի մարտի 3-ը:

Փառատոնի նպատակն է դպրոցահասակ երիտասարդների շրջանում գիտական հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության սերմանումը, խմբային աշխատանքի, նորարարական նախագծերի իրականացման եւ դրանց ներկայացման հմտությունների զարգացումը:

«Հայկական համադպրոցական գիտության փառատոն-2025» մասնակցության համար անհատական կամ հետազոտական խմբերը (մինչեւ 2 աշակերտ)՝ գիտական ղեկավարի աջակցությամբ, ուսումնական տարվա ընթացքում պետք է իրականացնեն իրենց կողմից առաջադրված գիտահետազոտական նախագիծը եւ արդյունքները ներկայացնեն փառատոնի եզրափակիչ փուլում: Եզրափակիչ փուլի ընթացքում աշակերտների ներկայացրած հետազոտական նախագծերը կգնահատի մասնագիտական հանձնաժողովը: Եզրափակիչ փուլին կորոշվի յուրաքանչյուր անվանակարգի «Լավագույն նախագիծ» մրցանակը, ինչպես նաեւ միջազգային գիտատեխնիկական փառատոններին մասնակցող նախագծերը:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք գրել assf@scs.am էլ. փոստին կամ զանգահարել (+374 10) 599-620 հեռախոսահամարով:

ՄԱՐՔԱԿԱՆ

«ՆՈՅԱՆ» ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՆՈՐԵԿԻՆ

Պորտուգալիայի բարձրագույն լիգայից «Նոյայի» կազմը վարձակալական հիմունքներով համալրել է պորտուգալացի աջ եզրային վինգեր Բրունո Ալմեյդան: Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը:

28-ամյա վինգերը հանդես է եկել պորտուգալական ակումբներում: 2023/24 մրցաշրջանում «Սանտա Կլարայի» կազմում հռչակվել է Պորտուգալիայի 2-րդ լիգայի չեմպիոն՝ 32 խաղում դառնալով 15 գոլի եւ 4 գոլային փոխանցման հեղինակ:

Բրունո Ալմեյդան Պորտուգալիայի բարձրագույն լիգայում անցկացրել է 29 հանդիպում՝ դառնալով 1 գոլի եւ 3 գոլային փոխանցման հեղինակ:

«Տեսնելով «Նոյայի» եւ մարզչի հաջողությունները՝ դարձա այս ճանապարհի մի մասը: Այս մարզաշապիկը կրելը պատիվ է ինձ համար, եւ ես պատրաստ եմ անել առավելագույնը՝ աջակցելու թիմակիցներիս եւ օգնելու մեր հավակնոտ ակումբին հասնել ամենաբարձր նվաճումներին՝ երկրպագուների եւ հայկական ֆուտբոլի համար»,- ասել է նորեկը:

«ԼԻՈՆ»–Ի ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉԸ ԼՔԵԼ Է ՊԱՇՏՈՆԸ

Ֆրանսիական «Լիոնի» գլխավոր մարզիչ Պյեր Սաժեն լքել է պաշտոնը, հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը: Մասնագետի հետ թիմը լքել է նրա ողջ մարզչական շտաբը: Ըստ տարբեր աղբյուրների՝ Սաժեի փոխարեն թիմը կարող է գլխավորել պորտուգալացի մասնագետ Պաուլո Ֆոնսեկան:

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Բարսելոնան» կերկարաձգի պայմանագրի ժամկետը կիսապաշտպան Գավիի հետ: Այս մասին տեղեկացնում է ինսահդեր Ֆաբրիցիո Ռոմանոն:

Կողմերը հասել են նոր պայմանագրի ստորագրման շուրջ պայմանավորվածության: Նոր պայմանագրի ժամկետը նախատեսված կլինի մինչեւ 2031 թվականը, իսկ հրաժարագինը կկազմի 1 միլիարդ եվրո: Նշվում է, որ կողմերը դեռ քննարկում են պայմանագրում ներառվելիք որոշ կետերը:

Գավին ընթացիկ մրցաշրջանում մասնակցել է 19 հանդիպման՝ դառնալով 2 գոլի եւ 3 գոլային փոխանցման հեղինակ:

«ԲԱՎԱՐԻԱՆ» ՆՈՐ ԴԱՐՊԱՍԱՊԱՀ ՈՒՆԻ

Մյունխենի «Բավարիան» հայտարարել է «Քյոլնի» դարպասապահ Յոնաս Ուրբիգի տեղափոխության մասին:

21-ամյա գերմանացու հետ պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2029 թվականի ամառ: Տրանսֆերի արժեքը 7 միլիոն եվրո է: Ընթացիկ մրցաշրջանում Ուրբիգը «Քյոլնի» կազմում անցկացրել է 11 հանդիպում: Նա նաեւ Գերմանիայի երիտասարդական հավաքականի դարպասապահն է:

● *Փետրվարի 5-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Ես անուն չունեմ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 5.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Միջմարզային ճանապարհին թույլատրելի արագությամբ երթևեկելիս մեքենաս վնասվել է՝ ընկնելով փոսը. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել փոխհատուցման համար:

Սամվել Մեսրոպյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Առաջնահերթ անհրաժեշտ է ահազանգել Ճանապարհային ոստիկանություն 1-77 հեռախոսահամարով եւ հայտնել տեղի ունեցած վթարի մասին մանրամասներ: Ճանապարհային ոստիկանության տեսուչները կգան դեպքի վայր, կկազմեն վթարի առաջացման սխեման, կարձանագրեն, որ վնաս է պատճառվել Ձեր ավտոմեքենային: Անհրաժեշտ է նաեւ տեղի ունեցածի մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան վթարի պահից 40 րոպեի ընթացքում զանգահարել այն ապահովագրական ընկերություն, որտեղ ապահովագրել եք Ձեր տրանսպորտային միջոցը: Այնուհետեւ պետք է լուսանկարահանել եւ տեսանկարահանել ճանապարհի այդ հատվածում առկա փոսը, մեքենայի վնասված հատվածները, որոնք հետագայում անհրաժեշտ է դիմումին կից ներկայացնել ապահովագրական ընկերություն՝ խնդրելով իրականացնել Ձեր մեքենային պատճառված վնասի չափի փորձաքննություն եւ պարզել Ձեր մեքենային պատճառված վնասի չափը: Եթե ապահովագրական ընկերությունը մերժում է իրականացնել փորձաքննությունը՝ պատճառաբանելով, որ տեղի ունեցածը ճանապարհատրանսպորտային պատահար չէ, ապա Դուք կարող եք փորձաքննություն պատվիրել այլ մասնավոր փորձագիտական կազմակերպություններում: Միաժամանակ անհրաժեշտ է պարզել, թե ում վրա է դրված ճանապարհի այդ հատվածի պահպանումը: Այդ նպատակով անհրաժեշտ է դիմել համապատասխան մարզի ղեկավարին՝ մարզպետին՝ խնդրելով հայտնել, թե ում վրա է դրված ճանապարհի այդ հատվածի պահպանումը եւ վերանորոգման պարտականությունների կատարումը: Եթե ճանապարհի պահպանումը դրված է մարզպետարանի վրա, ապա հենց մարզպետարան էլ պետք է դիմում ներկայացնել՝ վնասների փոխհատուցման պահանջի մասին՝ դիմումին կից ներկայացնելով այն բոլոր լուսանկարներն ու նյութերը, որոնք վերաբերում են տեղի ունեցած պատահարին:

ՀՀ ՏԿԵՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վնասների փոխհատուցում չտրամադրելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել դատարան՝ ընդդեմ այն մարզպետարանի կամ կազմակերպության, որի վրա դրված է եղել ճանապարհի պահպանումը եւ ժամանակին վերանորոգումը:

ԷՋԸ՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ, որ տղաներս միասին ծառայեն միեւնույն զորամասում. ո՞ւմ դիմել եւ ի՞նչ անել:

Դիանա Մելքոնյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ օրենսդրությունը հնարավորություն է ընձեռնում երկու եղբայրներին ծառայելու միեւնույն զորամասում միմյանց հետ: Այս մոտեցումը հնարավորություն է ընձեռում երկու եղբայրներին ծառայության ընթացքում լինել միմյանց կողքի, որն էլ ավելի է ամրապնդում եղբայրների կողմից պատշաճ ծառայություն տանելու հնարավորությունները, թույլ է տալիս եղբայրների ծնողներին ավելի քիչ ծախսեր կատարել իրենց երեխաներին տեսակցելու համար: Այդ նպատակով կրտսեր եղբայրը պետք է համապատասխան դիմում ներկայացնի տարածքային զինկոմիսարիատ՝ ցանկություն հայտնելով ծառայությունը կրել իր ավագ եղբոր հետ նույն զորամասում:

ՀՀ պաշտպանության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առկա են նաեւ որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես՝ եթե ավագ որդու ծառայությունը ավելի է 17 ամսից, ապա այդ դեպքում կրտսեր եղբայրը չի կարող իր ծառայությունը կրել այն զորամասում, որտեղ ավագ եղբայրն է ծառայում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ՝ երեկոյան, հայտնի դարձավ, որ Հայաստանը ներկայացնող պրոֆեսիոնալ թենիսիստ Էլինա Ավանեսյանը հաղթանակով է մեկնարկել Լինցի WTA մրցաշարում:

Մրցաշարի անդրանիկ փուլում Էլինա Ավանեսյանի մրցակիցն աշխարհի 53-րդ ռակետ չեխ Կատերինա Սինիակովան էր: Մեկ ժամից ավելի ձգված մրցախաղն ավարտվեց Ավանեսյանի հաղթանակով՝ 6:3, 6:2 հաշվով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 - 2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 -18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.1.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*